

ացելութեան առթիւ, Յարութիւն քհն կ'ընծայէ Փլիլիպպոս Առաքեալին մասունքը. խաչի մը մէջ շեղեղուած:

ՅԵԱՒԼՉԻ՞ (ՄհՏ.) ԵՒ ԿԵՆԱԿԻՅՆ ՄԶԿԻՒԼՊԻՔԱՅ՞.— Ս. էջ-միածնի միաբան Սաչիկ վրդ. Տատեանի Պարսկաստանէն բերած հնութիւններու մէջ կը գտնուի արծաթէ գործած ծոցուրար մը չորս պատկերով. որք են. Ս. Պօղոս, Ս. Պետրոս Առաքեալները, Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Ս. Գրիգոր Աստուածաբան. ամենուն ալ տարազները նախշուն և կարմիր. կը թուի թէ մհտ. Յեաւլչի և իր կողակիցը այս ուրարը շինել տուած են Ս. Յարութեան տաճարին համար, բայց անձանօթ կը մնայ թէ ինչպէս այս ծոցուրարը գտնուած է Թաւրիզի Էրեղաթաղի Աստուածամօր եկեղեցիին մէջ: Ուրարին յիշատակարանն է հետեւեալը. «Յիշատակ է ուրարս մահտասի Յեաւլչիին և կենակցին Մհկուլպիքային, և ծնողացն և զաւակացն, և ամենայն զարմացն ի զուռն Սուրբ Յարութեան Թվ. ՌՃԺԴ (= 1665) (Արարս 1895. էջ 314):

ՅԵՍՈՒ ՎՐԴ.— Մբ. 1841ին կ'ընտրուի առաջնորդ Սեբաստիոյ վիճակին և Ս. Նշան վանքին (Հայ Վանկեր. էջ 105).

ՅԻՍԷ ՈՐԴԻ ՍՍՐԳԻՍ ԵՐԻՑՈՒ.— ՄՁ. Թ. 1956 ձեռագիր Աւեստանը ունի յիշատակարան մը որ է հետեւեալը. «Ես Յիսէ որդի Սարգիս Երիցուն որ տվի զԱձարան. աւետարանս յերսղմ. ի Ս. Յակոբ յիշատակ իմ հաւրն Սարգիս երիցուն և իմ մաւրն Աղբերացին որ յԱձ.են հանգուցեալ. ես Յիսէս և իմ քոյրն Մարիամս, որ տվաք մեր սրտի կամաւք և յօժարութեամբ զարծաթապատ աւետարանս, յիշատակ մեզ և մեր ննջեցելոցն և մի ոք իշխեսցէ հանել զաւետարանս ի Ս. Յակոբայ» (նզովք): (Սապ. Յոց. տետր. Բ. էջ 105—6):

ՅՈՎԱԿԻՄ (ՄՉՏ.) ԹՕՓՍԱԳԱԼԵԱՆ, ՏՐԱՊԻՉՈՆՑԻ.— Ծ. 1840 ին. 1885 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. ապա կը մեկնի Կիպրոս և Պէրութ. ուր կը վախճանի 1902ին: Մհտ. Յովակիմ իր 400 գաղ. ոսկւոյ հարստութիւնը կը կտակէ Ազգ. Հիւանդանոցին. իսկ իր սենեակին կարաօրիններուն արժէքը կը թողու Ս. Յակոբի վանքին (Ընդոր. 1904):

ՅՈՎԱԿԻՄ ՊԵ. ՔԱՆԱՔԵՌՑԻ (ԵՐԵՒԱՆ).— Կը կոչուի Ծովածիւն, վասն զի կը պատմուի թէ՛ առաջին անգամ Երուսաղէմ